RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

1-ին եռամսյակ 2026 թ.

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2026 թ. 1- ին եռամսյակում Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթը, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Զուտ շահույթ

- 2026թ. 1-եռամսյակի ընթացքում Հայաստանում գործող բոլոր բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է շուրջ **103,5 մլրդ ՀՀ դրամ**, ինչը **2,7 մլրդ ՀՀ դրամ** կամ **2,6%**-ով ավել է քան 2025 թվականի նույն ժամանակաշրջանում գրանցած արդյունքը:

- Ամենամեծ շահույթը արձանագրել է Արդշինբանկ-ը շուրջ **33,1 մլրդ ՀՀ դրամ:**

Բանկերի զուտ շահույթը 1-ին եռամսյակ 2026 / 1-ին եռամսյակ 2025 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2026թ. 1-եռամսյակի ընթացքում աճել են շուրջ **321 մլրդ ՀՀ դրամով**, կամ **2,5%:**
- Առ 31.03.2026, ընդհանուր ակտիվները կազմել են **13.153 մլրդ ՀՀ դրամ:**

Բանկերի ընդհանուր ակտիվները - 31.03.26 և 31.12.25 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, ԱՄԻՈ ԲԱՆԿ, և Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **62,4%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **48%:**
- Արդշինբանկ-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ **21,4%:**

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 31.03.26



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2026թ. 1-եռամսյակի ընթացքում աճել է **4,1%**-ով:
- Առ 31.03.2026 ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **8,011 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **61%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան - 1-ին եռամսյակ 2026թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

•- Ամենախոշոր **5** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ ԱԿԲԱ ԲԱՆԿ, *ԱՄԻՈ ԲԱՆԿ,* եւ Ինեկոբանկ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **64,5%:**

•- Ամենախոշոր **3** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ *ԱԿԲԱ ԲԱՆԿ)* ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **50,8%:**

•- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **22%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 31.03.26



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2026թ. 1-եռամսյակի ընթացքում աճել են **199 մլրդ ՀՀ դրամով,** կամ **1,9 %:**

- Առ 31.03.2026, ընդհանուր պարտավորությունները կազմել են **10.854 մլրդ ՀՀ**:

Բանկերի ընդհանուր պարտավորությունները - 31.03.26 և 31.12.25 (մլն ՀՀ դրամ)



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2026թ. 1-եռամսյակի ընթացքում աճել են **158 մլրդ ՀՀ դրամով,** կամ **2,2%:**
- Առ 31.03.2026, **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **7,493 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **69%:**



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը աճել է 2026թ. 1-եռամսյակի ընթացքում **296 մլրդ ՀՀ դրամով,** կամ **56,3%-ով** և կազմել է առ 31.03.2026 շուրջ **823 մլրդ ՀՀ դրամ**:

- **17** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **13-ը**:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 31.03.26 և 31.12.25 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- 2026թ. 1-եռամսյակի ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **123 մլրդ ՀՀ դրամով**, կամ **5,6%** ու կազմել **2.299 մլրդ ՀՀ դրամ**:
- Այդ աճը հիմնականում պայմանավորված է՝
- 1. Զուտ շահույթով – **103,5 մլրդ ՀՀ դրամ և**
- **2.** ԱՄԻՈ ԲԱՆԿ-ի կանոնադրական կապիտալի աճով**– 20 մլրդ ՀՀ դրամ**



Ընդհանուր կապիտալ

- Առ 31.03.2026թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **43%**-ը և հավասար է **964 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 31.03.2026թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **54**%-ը և հավասար է **1,207 մլրդ ՀՀ դրամ:**
- Առ 31.03.2026թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **3%**-ը և հավասար են **69 մլրդ ՀՀ դրամ:**

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 31.03.26



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am